

**Ապահիկ վարկավորման
Տեղեկատվական ամփոփագիր**

Թարմացվել է 21.08.2019թ.

Վարկը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) ներքոնշյալ պայմաններով.

Վարկի գումար և արժույթ	Նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 2,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	3 - 36 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	0%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	0 - 24%
Տրամադրման միանվագ վճար	0
Ամսական սպասարկման վճար	0 - 1%
Վարկի և տոկոսների մարման եղանակ	Անուիտետային /հավասարաչափ ամսական մարում/
Կանխավճար	Սկսած 0%-ից

Սահմանափակումներ

- Վարկի համար կարող են դիմել 21 - 60 տարեկան անձինք
- Դիմելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում Հաճախորդը չպետք է ունենա «ստանդարտ» դասից ավելի խիստ դասով դասակարգված վարկեր
- Դիմելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ժամկետանց օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 10-ը
- Դիմելու պահին Հաճախորդը չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություն (ներառյալ՝ երաշխավորություններ)
- Հաճախորդը Կոնվերս Բանկում կարող է ունենալ առավելագույնը երկու գործող ապահիկ վարկ
- Հաճախորդը դիմելու պահին չպետք է ունենա գործող 4-ից ավելի առանց գրավի վարկեր
- Հաճախորդի վարկային հայտը կարող է մերժվել, եթե հայտի ներկայացման օրվան նախորդող մեկ շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ ֆինանսավորում ստանալու համար դիմել է այլ բանկեր/վարկային կազմակերպություններ
- Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե վարկունակության գնահատման նպատակով ստացվող «Աքոա Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ վարկային զեկույցի տվյալներն արգելափակված են

Վարկի ապահովում

Ապահիկ ֆինանսավորման եղանակով տրամադրված միջոցներով ձեռք բերված ապրանքը ձևակերպվում է որպես գրավ (ծառայության ձեռքբերման դեպքում կարող է պահանջվել ապահովման այլ միջոց, այդ թվում՝ երրորդ անձանց երաշխավորություն):

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	1,000,000 ՀՀ դրամ
Անվանական տոկոսադրույք	0%
Ամսական սպասարկման վճար	1%
Մարման ժամկետ	36 ամիս
Մարման տեսակ	անուիտետային

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Մարումների հետ կապված գումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + սպասարկման վճար)	37,778
Ընդհանուր սպասարկման վճար	360,000
Մարումների հանրագումար	1,360,000

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ [հասցեում](#):

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ սահմանված չեն:

Ուշադրություն

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԲՌԱ Քրեդիտ Բեփորթինգ» ՓԲԸ-ին: Վարկ վարկային պարտություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարկ ստանալու համար դիմելիս Կոնվերս Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք Վարկի անհատական պայմանները:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

1	Դիմում - հայտ
2	Անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայությունների համարանիշի /ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք/ բնօրինակները կամ նույնականացման քարտ
3	Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման որոշման մասին տեղեկացնելու և վարկը տրամադրելու ժամկետները

Վարկի տրամադրման որոշման կայացումը, Հաճախորդի իրազեկումը և տրամադրումն իրականացվում է դիմելու օրը:

Վարկի ձևակերպման վայրը և տրամադրման եղանակը

Վարկը տրամադրվում է Բանկի հետ համագործակցող վաճառակետերում՝ գումարն անկանխիկ եղանակով փոխանցվում է վաճառակետի հաշվին:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511 211
- Skype՝ conversebank-callcenter